Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց

Թեմա՝ Գնահատում, գնահատման տեսակներ, գնահատման գործիքները դասավանդման ժամանակ

Վերապատրաստող, մենթոր՝ Լիլիթ Աղբալյան

Ուսուցիչ՝ Հայկանուշ Ճաղարյան

Իջևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3
Գնահատում 4
Ամփոփիչ գնահատում 8
Ընթացիկ գնահատում 9
Միավորային գնահատում 11
Ձևավորող գնահատում 17
Հետազոտական աշխատանք հարցաթերթիկի միջոցով 20
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 24
Գրականության ցանկ 26

Ներածություն

«Մենք գնահատում ենք ոչթե մարդուն,

նրա մտքերն ու ձեռքբերումները» :

Արսեն Վենգեր

Սովորողի կողմից կայուն գիտելիքներ ձեռք բերելու, կարողություններն ու հմտությունները զարգացնելու և դրանք իրական կյանքում կիրառելու համար պետք է հաշվի առնել տարբեր գործոններ, այդ թվում նաև գնահատման գործոնը, որը խթանող դեր է կատարում ուսուցման և ուսումնառության գործընթացում: Ինչպես հայտնի է դասավանդումն ու գնահատումը սերտորեն կապված են: Նոր մոտեցումներով գնահատումը ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման, կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ:

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում,որ ընթացիկ գնահատումների կանոնակարգված համակարգ ունենալը կնպաստի ուսումնական ողջ գործընթացի գնահատման և որակի բարձրացմանն ու բարելավմանը:

Գնահատման նպատակներն են

1. ուսումնառության ընթացքում նախապես մշակված հստակ չափորոշիչների միջոցով սովորողների առաջընթացի խթանում,
2. ուսումնական գործընթացի արդյունավետությունը,
3. ուսման որակի բարելավումը ,

4. ուսուցման և ուսումնառության ընթացքում ուսուցչի և սովորողի միջև հետադարձ կապի ապահովում,
5. անդրադարձի և վերլուծության ռեֆլեքսիայի կիրառում ՝ որպես գնահատման կարևոր բաղադրատարր,
6. սովորողների ձեռքբերումների մակարդակի ամրագրում ,
7. ստուգել սովորողի գիտելիքների մակարդակը, կարողությունների ու հմտությունների տիրապետման աստիճանը:

Գնահատում

Գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների և կարողությունների մասին տեղեկություններ ստանալու նպատակով:

Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողությունների զարգացման աստիճանը, ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման (ՀՊՉ, IX, կետ 37):

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակական(միավորային) և ձևավորող (ուսուցանելի) ձևերով (ՀՊՉ, IX, կետ 37):

Գնահատման վերաբերյալ ՀՊՉ-ով առաջարկվող փոփոխությունները.

1. Քանակական (միավորային) գնահատման համար կիրառվում է 10-միավորային սանդղակ, որտեղ որևէ թիվ անբավարար գնահատական

չի համարվում, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ (ՀՊՉ IX, կետ 39):

2. Ձևավորող ուսուցանող գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը (ՀՊՉ, IX, կետ 41):
3. 1-4 դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ որպես տարեկան ամփոփիչ գնահատական, կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի (ՀՊՉ, IX, կետ 44)
4. Միավորային գնահատումը կիրառվում է սկսած 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից սկսած (ՀՊՉ, IX, կետ 45):
5. 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից (ՀՊՉ, IX, կետ 46):
6. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիք նորի քանակական (միավորային) ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը կարող է իրականացվել ըստ ԱՈՒՊ-ի՝ 10-միավորային սանդղակով (ՀՊՉ, IX, կետ 47):

Գնահատման հիմնական գործառույթներն են՝

1. Սովորողի հիմնական գործունեության և առաջադիմության գնահատումը, կրթական մի աստիճանից՝ մյուսին անցնման հնարավորության ապահովումը, կրթության շարունակականության խրախուսումը,

2. Սովորողին ներկայացվող պահանջների կատարման, ուսումնական նյութի յուրացման աստիճանի բացահայտումը։
3. Դպրոցի գործունեության արդյունավետության բացահայտումը, ուսուցիչ-սովորող համագործակցային հարաբերությունների զարգացումը։
4. Սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակության և ծավալի ճշգրտումը։
5. Սովորողի անձնային որակների ձևավորման և վարքագծի բացահայտմանը նպաստելը, ինքնաճանաչողության ապահովումը։
6. Մանկավարժների վերապատրաստման և մասնագիտական աճի ապահովումը։
7. Չափորոշիչների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական այլնյութերի, ուսուցման մեթոդների կատարելագործման հիմքերի ապահովումը։
8. Հանրակրթության բարեփոխման ուղղությունների հստակեցումը, բովանդակությանարդիականացումն ու կրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին։
9. Սովորողի ուսումնական գործունեության արդյունքների որակավորումը։
10. Դպրոցի հանդեպ ծնողների, համայնքի, հանրության վստահության ձևավորումն ու ամրապնդումը։

Գնահատումը օգնում է բացահայտել ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները։

Ի՞նչն ենք գնահատում

- Գիտելիք
- Հմտություն
- Դիրքորոշում
- Արժեք

Գնահատման սկզբունքները

- Վավերություն
- Հուսալիություն
- Հավասարություն
- Օբյեկտիվություն
- Իրագործելիություն
- Թափանցիկություն

Գնահատման հիմնական նպատակները

Խթանում է → սովորելու ձգտումը

Հայտորոշում է → սովորողների ուսումնական հիմնախնդիրները

Որոշում է → սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի համապատասխանության աստիճանը չափորոշչի պահանջներին

Ապահովում է → հետադարձ կապ

Բարելավում է → կրթության որակը



Ամփոփիչ գնահատում

Ըստ նպատակի՝ չափորոշիչներով և ծրագրերով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան սովորողի ուսումնական

ձեռքբերումների գնահատումը՝ դասի, թեմայի, կիսամյակի, ուսումնական տարվա:



Ընթացիկ գնահատում

Ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողի ուսումնառության արդյունքների գնահատման երեք տեսակ.



Ամփոփիչ գնահատում՝ ստուգվում է ամբողջական թեմայի, դասընթացի առարկայի յուրացման աստիճանը:

Ընթացիկ գնահատում՝ ստուգվում է ուսումնական նյութի առանձին միավորի կամ դրա մի մասի յուրացման աստիճանը:

Ընթացիկ և ամփոփիչ գնահատումները դպրոցում կիրառվում են սովորողի ուսումնական գործունեության արդյունքը որակավորելու և դպրոցի մի աստիճանից մյուսին անցումն ապահովելու համար:

Ընթացիկ գնահատում

Ընթացիկ գնահատումը հանրակրթության գնահատման համակարգի առաջնային և կարևոր մասն է: Դրա շնորհիվ պարզվում են սովորողների, ուսուցիչների և դպրոցների կողմից պետական,առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ընթացքը և արդյունքները, ուսուցման գործընթացում սովորողների և ուսուցիչների ձեռքբերումներն ու դժվարությունները: Ընթացիկ գնահատումը շարունակական տեղեկատվություն է ապահովում ուսուցման ընթացքն ուղղորդելու, դասավանդման և ուսումնառության որակը բարձրացնելու համար:

Ընթացիկ գնահատման նոր համակարգի համար ամրագրվում են հետևյալ կարևոր գործառույթները.

ա. ճշգրտել սովորողի հետ տարվող անհատական աշխատանքի բովանդակությունն ու ծավալը, խթանել յուրաքանչյուր սովորողի ուսումնական ակտիվությունը,

բ. հայտորոշել ուսուցման ընթացքը և արդյունքները,

գ. շաղկապել ուսուցումը ուսումնառության հետ,

դ. փոխադարձ կապ ապահովել սովորողի, նրա ծնողի հետ,

ե. հաշվառել սովորողի առաջադիմության ընթացքը,

զ. վերահսկել ուսուցման գործընթացը և արդյունքները:

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է երկու իրար փոխլրացնող ձևերից՝

ա) **ուսուցանող գնահատում (ձևավորող գնահատում)**, որն իրակա-նացվում է առանց գնահատականը գրանցելու և, սովորաբար, ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկություններով, դիտողություններով կամ մեկնաբանություններով,

բ) **միավորային գնահատում**, որը կիրառվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանը ստուգելիս, և որն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով:

Միավորային և ձևավորող գնահատման համեմատումը.

Միավորային	Ձևավորող
Իրականացվում է ուսուցման փուլի ավարտին:	Իրականացվում է ուսուցման ողջ ընթացքում:
Գնահատումն իրականացնում է ուսուցիչը:	Գնահատմանը մասնակցում են, թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողը:
Գնահատման արդյունքում տրվում է առաջադիմության թերթիկ:	Գնահատման արդյունքում տրվում է սովորողի բնութագիրը:
Ամրագրում է ուսուցման փուլի արդյունքը:	Բացահայտում է սովորողի ուժեղ և թույլ կողմերը, բարելավում է ուսուցման գործընթացը:
Գնահատվում է նույն հաստատուն՝ 1-10 սանդղակով:	Գնահատումն իրականացվում է տարբեր ՁԳ գործիքներով;

Միավորային գնահատում

Ուսումնական որոշակի նյութից սովորողի ուսումնական ձեռքբերումները գնահատելիս ուսուցիչը կիրառում է գնահատման 10 միավորային սանդղակը.

- 1 միավոր (շատ վատ) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս պատրաստվածություն չի ցուցաբերում,
- 2 միավոր (վատ) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է մասնակի պատրաստվածություն և թույլ է տալիս էական սխալներ,
- 3 միավոր (անբավարար) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություններ, թերություններ կամ բացթողումներ,
- 4 միավոր (բավարար) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում,
- 5 միավոր (միջին) - 1-ին կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ կամ բացթողումներ,
- 6 միավոր (միջինից բարձր) - 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում
- 7 միավոր (լավ) - 2-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելու համար ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ կամ բացթողումներ,

- 8 միավոր (շատ լավ) - 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց թույլ է տալիս ոչ էական թերություն կամ վրիպում,
- 9 միավոր (գերազանց) - 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, կամ դժվարավուն բարդության առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է պատրաստվածություն, սակայն թույլ է տալիս անճշտություն, թերություններ կամ բացթողումներ
- 10 միավոր (բացառիկ) - դժվարավուն առաջադրանքներ կատարելիս ցուցաբերում է անհրաժեշտ պատրաստվածություն, բայց կարող է թույլ տալ ոչ էական թերություն կամ վրիպում:

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ ամրագրելու համար գործածության մեջ են ստուգման հետևյալ տեսակները՝

1. բանավոր հարցում,
2. գործնական աշխատանք,
3. թեմատիկ գրավոր աշխատանք,
4. կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

1. Բանավոր հարցում

Սա գնահատման մի տեսակ է,որի ժամանակ աշակերտը բանավոր խոսքով ներկայացնում է յուրացրած ուսումնական նյութը: Բանավոր հարցման հիմնական առավելությունն այն է, որ դրանով ստուգվում են սովորողի ոչ միայն մտապահման ու վերարտադրման ընդունակու-թյունները, այլ նաև նյութի գիտակցված ընկալման մակարդակը: Բանավոր

հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով.

- բանավոր խոսք
- վերարտադրություն,
- հաղորդակցություն,
- համագործակցություն,
- լեզվամտածողություն,
- գիտիլիքի յուրացում,
- տրամաբանություն
- ստեղծագործական մտածողություն։

Բանավոր հարցումը կարելի է իրականացնել՝ առանձին կամ գրատախտակի մոտ հարցման միջոցով, տնային աշխատանքների ստուգմամբ, համագործակցային տեխնոլոգիաների կիրառմամբ։

2. Գործնական աշխատանք

Ժամանակակից պայմաններում ուսուցման կարևոր նպատակներից մեկն է՝ աշակերտին սովորեցնել ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները կիրառել կյանքում հանդիպող տարբեր գործնական խնդիրներ լուծելիս։ Գործնական կարող ենք համարել այն աշխա-տանքները,որոնց կատարման համար թուղթ ու գրիչից բացի օգտագործվում են նաև այլ միջոցներ։ Գործնական աշխատանքներ են ուսումնական փորձերն ու լաբորատոր աշխատանքները։ Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

- ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ

- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը։

Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են 2 ձևով։ Առաջին՝ աշակերտը դասընկերների ներկայությամբ կատարում է որոշակի գործնական առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով։ Մյուս աշակերտները հետևում են բացատրությանը և անհրաժեշտության դեպքում, կատարում համապատասխան շտկումներ կամ մեկնաբանություններ։ Երկրորդ՝ սովորողների կարողությունների ու հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր աշակերտին տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք։

3. Թեմատիկ աշխատանք

Թեմատիկ գրավոր աշխատանքն միավորային գնահատման մի տեսակ է, որի իրականացման ընթացքում սովորողն իր ուսանած ուսումնական նյութը ներկայացնում է գրավոր։ Թեմատիկ գրավոր աշխատանքում պետք է ընդգրկվեն սովորողներին ներկայացվող չափորոշիչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ՝ դրանց յուրացման մակարդակը բացահայտելու նպատակով։ Կախված ուսումնական առարկայից և թեմայից՝ թեմատիկ աշխատանքը կարող է լինել և բանավոր կամ գործնական։ Առաջադրանքները կարող են տրվել թեստերով որոնցում ներառված են տարաբնույթ առաջադրանքներ.

- ճիշտ պատասխանի ընտրությամբ,
- կարճ պատասխան պահանջող,
- գործնական, կիրառական նշանակություն ունեցող
- կառուցվածքի փոփոխություն պահանջող,
- գծապատկերի կազմման պահանջով,

- բաց թողածը լրացնելու պահանջով,
- ապացուցում պահանջող,
- ստեղծագործական մոտեցում պահանջող։

Թեմատիկ գրավոր աշխատանքներում պետք է ներառվեն 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի բարդության առաջադրանքներ, որոնք պահանջում են նյութի խորքային յուրացում։ Այդ գրավոր աշխատանքները գնահատվում են տաս միավորային համակարգով։

Կարևոր են նաև կարճաժամկետ գրավոր աշխատանքները, որոնց տրման նպատակն է որոշել ուսումնասիրված թեմաներից սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ու դրա հիման վրա կատարել եզրահանգումներ և պլանավորել անհրաժեշտ քայլեր։

4. Կիսամյակային ամփոփիչ աշխատանք

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքի նպատակն է պարզել կիսամյակի ընթացքում աշակերտի ձեռք բերած գիտելիքի և կրթության բովանդակության «կարողություններ և հմտություններ» բաղադրիչի մակարադկը, ինչպես նաև պարզել կիսամյակի վերջում աշակերտի մնացորդային գիտելիքը։

Կիսամյակային ամփոփիչ աշխատանքը կարող է իրագործվել բանավոր հարցման, գրավոր աշխատանքի կամ գործնական աշխատանքի միջոցով։ Հարցման ձևը որոշում են առարկայական մասնագետներն ու տնօրինությունը։ Այս գրավոր աշխատանքին տրվող ժամանակը որոշվում է՝ կախված ուսումնական առարկայից։ Աշխատանքին տրվող ժամանակը պետք է համապատասխանի թեստի առաջադրանքները կատարելու աշակերտի հնարավորություններին։ Թեստը պետք է ապահովի աշակերտի

առավելագույն, և չափորոշիչային նվազագույն գիտելիքներ ունեցող աշակերտի՝ անցումային, միավոր ստանալու հնարավորությունը:

Ձևավորող գնահատում

Ձևավորող գնահատումը՝

- ուսուցչին հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի և անբողջ դասարանի ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումը՝

- ապահովում է հետադարձ կապն ուսումնական գործընթացում, որի արդյունքների հիման վրա իրականացվում են աշխատանքների յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի առաջադիմության բարելավման ուղղությամբ:

Ձևավոնող գնահատումը՝

- կարող է իրականացվել թեստերի, բանավոր հարցումների, գործնական, տնային աշխատանքների միջոցով:

Ձևավորող գնահատման

- ժամանակ օգտագործվում են սովորողի առաջընթացը բնութագրող որակումներ, վերլություններ և մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատման նպատակն է՝

- բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,
- բացահայտել, վեր հանել ուսումնական նյութի յուրացման հետ կապված խնդիրները,
- սովորողին ուղղորդել տվյալ նյութը սովորելու, բացթողումները շտկելու անհրաժեշտության գիտակցմանը,
- ճշգրտել կիրառվող դասավանդման ռազմավարությունների և մեթոդների նպատակահարմարությունը:

Ձևավորող գնահատման բաղադրիչները



Ձևավորող գնահատման քայլաշարը



Ձևավորող գնահատումը կատարվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, այն հետապնդում է սովորողի առաջադիմության բարձրացման և կրթության որակի բարելավման նպատակ:

Ձևավորող գնահատումը ուսուցչին հնարավորություն է տալիս պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի, դասարանի ձեռքբերումները, դժվարությունները, բացթողումները և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու համար: Գնահատման այս ձևում կարևորվում է հետադարձ կապի առկայությունը: Հետադարձ կապը մեկնաբանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում առաջացած թերությունների շտկման գործողությունների թե՛ սովորողի և թե՛ ուսուցչի համար: Այս դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը: Ուսուցանող գնահատման նպատակով երաշխավորվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝

- բանավոր հարցում
- գրավոր աշխատանք տանը և դպրոցում
- ինքնուրույն աշխատանք
- բաց հարցերով քննարկում
- ինքնագնահատում և փոխադարձ գնահատում
- աշխատանք:

Հետազոտական աշխատանք հարցաթերթիկի միջոցով

Հետազոտության նպատակն է բացահայտել միավորային և ուսուցանող գնահատման իրագործման արդյունավետությունը: Ստուգման համար կազմվել է հարցաթերթիկ և իրականացվել հարցում: Հարցումն անանուն էր, բաղկացած 8 հարցից, որին մասնակցել են 15 ուսուցիչ: Ստորև ներկայացնում ենք հարցման արդյունքները:

1. Քանի՞ տարվա աշխատանքային փորձ ունեք.

   ա) 1-5

   բ) 5-15

   գ) 15-25

   դ) 25- ից ավելի



2. Որքանո՞վ հարմարավետ եք համարում գնահատման գործող համակարգը.

   ա) հարմարավետ է

   բ) մասամբ է հարմարավետ

   գ) հարմարավետ չէ



3. Գնահատման որ՞ ձևերն ենք հիմնականում կիրառում դպրոցում.

ա) միավորային

բ) ձևավորող

գ) երկուսն էլ



4. Գնահատումը հնարավորություն է տալիս չափելու սովորողի ձեռք բերած գիտելիքները.

ա) այո

բ) մասամբ

գ) ոչ



5. Ամենօրյա դասապրոցեսի ընթացքում ինչ՞ հաճախականությամբ եք կատարում միավորային գնահատում.

ա) հաճախ եմ կատարում

բ) երբեմն կատարում եմ

գ) չեմ կատարում



6. Արդյո՞ք գնահատականը աշակերտի համար առաջնային խթան է՝ բարձր առաջադիմություն ցուցաբերելու համար.

ա) այո

բ) ոչ



7. Կարողանու՞մ եք հստակ հիմնավորել ձեր դրած գնահատականը.

ա) այո

բ) մասամբ

գ) ոչ



8. Միավորային գնահատման որ՞ տեսակն եք համարում ամենահավաստին.

ա) բանավոր

բ) գործնական

գ) թեմատիկ գրավոր աշխատանքներ



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարծում եմ, որ հատկապես կարևոր է ձևավորող գնահատումը: Բայց պետք է նշել, որ միավորային գնահատումը ոգևորում է, մյուս կողմից էլ երբեմն խանգարում երեխաներին: Երեխան սկսում է սովորել զուտ բարձր գնահատականի համար: Այստեղ կա նաև ծնողի գործոնը: Երբեմն որոշ ծնողների ճնշման ազդեցության տակ երեխաները ձգտում են միմիայն բարձր գնահատականների, և անգամ մի փոքր ցածր գնահատականը բերում է խոր հիասթափությունների:

Դպրոցում աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ սովորողը դիտվի և իրականում լինի ուսուցման լիարժեք սուբյեկտ, մասնավորապես նաև՝ գնահատման գործընթացի սուբյեկտ:

Աշակերտն իր ուսումնառության պրոցեսը կկարողանա լավագույնս կազմակերպել, եթե հստակ պատկերացում ունենա թե իրենից ինչ են պահանջում և ինչպես են գնահատում իր ձեռքբերումները: Եթե դպրոցը սովորողին ներքաշում է գնահատման գործընթաց, դարձնում է նրան այդ գործընթացի ակտիվ մասնակից, ապա վերջինս կկարողանա իսկապես օգտվել գնահատման արդյունքներից և գնահատումը ծառայեցնել իր ուսումնական նպատակներին:

Ավարտելով այս հետազոտական աշխատանքը՝ հանգել եմ հետևյալ եզրակացությունների.

– Ուսուցիչները դպրոցում հիմնականումմ կիրառում են և՛ միավորային, և՛ ձևավորող գնահատումները:
– Ուսուցիչները գնահատման 10-միավորային համակարգից օգտվելու դժվարություններ ունեն և մասամբ են հարմարավետ զգում առանձին միավորների բնութագրիչները կիրառելիս:

- Միավորային և ձևավորող գնահատման ձևերի կիրառումն իրականացվում է լուրջ թերություններով: Ուսուցիչները հիմնականում լավ չեն պատկերացնում ձևավորող գնահատման նպատակը, մեթոդները և գործիքները:
- Անհրաժեշտություն կա վերանայելու գնահատման 10-միավորային համակարգի բնութագրիչները բոլոր առարկաների մասով և հասանելի դարձնել դպրոցներին՝ խուսափելու համար գնահատելիս սուբյեկտիվ ընկալման և մոտեցման հնարավորությունից:
- Ուսուցիչները միավորային գնահատման տեսակներից ամենահավաստին համարում են բանավոր և թեմատիկ գրավոր աշխատանքի գնահատուները:
- Ուսուցիչների 93%-ը փաստում է, որ կարողանում է հստակ հիմնավորել իր դրած գնահատականը:
- 15 ուսուցիչներից 10-ը գտնում է, որ գնահատականը աշակերտի համար առաջնային խթան է՝ բարձր առաջադիմություն ցուցաբերելու համար:

Գրականության ցանկ

1. ՀՀ Հանրակրթական Պետական Չափորոշիչ,
2. ԿԶՆԱԿ հիմնադրամ
3. Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, 2005թ.
4. Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան։ Ուսուցչի ձեռնարկ /Ս.Օ.Միքայելյան, Օ.Ս.Միքայելյան/ ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, 2010թ.